Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 39

ք. Երևան **10.05.2023թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 14.1-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/10014-2023, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.3/7447-2023, ՀՀ էկոնոմիկայի 01/7903-2023 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչությունների, Քաղաքաշինության 06/11.1/5274-2023 և Կադաստրի ԱԳ/5639-2023 կոմիտեների գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի հողերի** նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Աբովյան համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության հողերից **0.05846 հա** գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր (կադաստրային ծածկագիր՝ 07-043-0011-0042) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության, որից **0.05126 հա** բնակելի և **0.0072 հա** հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողեր՝ բնակելի տուն և հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Հ. Մկրտչյան